Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 762 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Նախատեսվում է միանվագ դրամական աջակցություն տրամադրել Լեռնային Ղարաբաղից տեղահանված 3,160 անձի՝ իրենց հրատապ կարիքները (սնունդ, հիգիենայի պարագաներ, հագուստ, մահճակալ և այլն) հոգալու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործները	1. Եկեղեցիների համատեղ գործունեություն դաշինք (ACT Alliance), Ռու դե Ֆերնի 150, Շվեյցարիա 2. Ուղղափառ եկեղեցիների միջազգային բարեգործական կազմակերպության (IOCC), Բալտիմոր, Մարիլենդ, ԱՄՆ 21204 3. Շվեյցարիայի Ավետարանական Եկեղեցիների օգնության կազմակերպություն (HEKS/EPER). Զեմինար փողոց 28, 8042 Ցյուրիխ (Seminarstrasse 28, P.O. Box, 8042 Zürich), 4. Դանիական եկեղեցու օգնություն (Dan Church Aid). Մելդալսգադ 3, Կոպենհագեն, 1613
4.	Ծրագրի կատարողը	Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ (ՀՎՀՀ՝ 04717139, ՀՀ 1101, Արմավիրի մարզ, քաղ. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականցվելու է Հայաստանի Հանրապետության Արարատի և Գեղարքունիքի մարզերում, բնագավառը՝ սոցիալական:

6.	Ծրագրի բյուջեն	177,200,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրի շահառուներ են հանդիսանում Լեռնային Ղարաբաղից տեղահանված 3,160 անձինք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Տրամադրվելու է դրամական աջակցություն տեղահանված 3,160 անձի, յուրաքանչյուրին 50,000-ական դրամ: Իրականացվելու է 2023 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 158,000,000 դրամի չափով: 2. Ծրագրի գործողության ողջ ընթացքում Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամը ներգրավելու է շահառուների և շահագրգիռ կողմերի հետ անմիջականորեն աշխատող, համապատասխան որակավորում ունեցող անձնակազմ՝ 8 աշխատակից, ներառյալ տնօրեն, ծրագրի համակարգող, պատասխանատուներ, հաշվապահներ, վարորդ: Անձնակազմը պատասխանատվություն է կրում ծրագրի շահառուների նույնականացման, տվյալների հավաքագրման, կարիքների գնահատման, աջակցության տրամադրման մշտադիտարկման, բարեգործների պահանջներին համապատաս-խան իրականացման, ծրագրային միջոցների արդյունավետ օգտագործման, աուդիտորական ստուգումներ կազմակերպելու, ժամանակին և ճշգրիտ հաշվետվություններ ներկայացնելու համար: Իրականացվելու է 2023 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակա-հատվածում՝ 13,700,000 դրամի չափով: 3. Ձեռք են բերվելու հեռահաղորդակցության, բանկային կամ փոստային, տրանսպորտային, սպասարկման և աուդիտորական ծառայություններ, գրասենյակային պարագաներ, վառելիք: Իրականացվելու է 2023 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 5,500,000 դրամի չափով:

10.	Ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Վառելիք՝ 1,000,000 դրամ, 2. Աուդիտորական ծառայություններ՝ 1,650,000 դրամ, 3. Գրասենյակային պարագաներ, սպասարկում, հեռահաղորդակցություն, կոմունալ ծառայություններ՝ 1,270,000 դրամ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը կազմում են բյուջեի 9.4 %-ը, 16,620,000 դրամ, այդ թվում՝ 1. Աշխատավարձեր՝ 13,700,000 դրամ, 2. Գրասենյակային պարագաներ, տրանսպորտային, հեռահաղորդակցության, կոմունալ, սպասարկման ծախսեր՝ 1,270,000 դրամ, 3. Աուդիտորական ծառայություններ՝ 1,650,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ